ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՊՐԻԼ 1, 1894 ԹԻՒ 6

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West 23d St. New York, N. Y. Vol. IV, 1894

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական Հոգեբանութիւն. Ազգային Դաւանանք "Հայք"ի— Պորզ Խօսք— Օտար Կին մի Հայացած— Յետհայեաց Ակնարկ մի. Ռուս Զարհուրականք— Բարիզու Հայ Ուսանողաց Ընկերութիւնն — Նամակ ի Քալիֆորնիայ—Նուիրատուութիւնք—Ամերիկեան Մամուլն և Հայկական Խնդիրն— Խմբագրական Դիտողութիւն — Այլևայլք։

Մեր Պատ. ընթերցողաց ուշադրութիւնն կը հրաւիրեմք ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔԻՆ վերայ որ կը վերջանայ ներկայ թուով։ Այդ ուսումնասիրութիւն ստուար հատորի մի մէջ պարզուելու առնգին խնդիրներ կը սեղմէ մի քանի երեսներու մէջ։ Ուշիմ ընթերցողք կարող պիտի լինին իրենց խորհրդածութեամբք ընդլայնել ինչ որ յընծիւղի է անդ։ Փափաքելի է որ մշակեալ հայրենակիցք հրատարակութեան տան իրենց հայնացիներ նորա հիմնական գաղափարաց նկատմամբ։ Ըստ մեզ խնդիրն վերջին աստիճան շահեկան է և լուրջ քննութեան արժանի։

ՊԱՏՐԻԱՐՔՆ ՍՊԱՆՆԵԼՈՒ ՓՈՐՁ

Ապրիլ 30ին հեռագիր մի Կ. Պոլսէն կ'ասէ թէ անցեալ կիրակի հայոց Պատրիարքին Մայր Եկեղեցիէն ելնելու պահուն՝ զնդակ արձակեց ոմն, բայց չյաջողեցաւ զարնել։ Ոճրագործն ձերբակալուած է, և խոստովանած է թէ որոշուած էր սպաննել զպատրիարքն իբրեւ "հայկական գործերն վարելու անկարող ոք։"

Բարիզու հայ ուսանողաց ընկերութիւնն շնորհաւորողութեան արժանի է իւր վերսկսեալ գործունէութեան համար։ Կը մաղթենք որ անվհատ շարունակեն և ընդհանուր ու ազգային շահեկանութիւն ունեցող խնդրոց ուսումնարան մտանեն իրենց ընկերութիւնն։

Քալիֆորնիայէն գրող մեր յօդուածագիրն իրաքունք ունի անօգուտ համարելու Մեծ Տէրութեանց աղերսագիր յղելու փափաքն ու շարժումն. այդ մասին պիտի խօսիմք յառաջիկայ թուով։

Ռուս զարհուրականաց կամ դէռոռիստներու վերայ գրուած յօդուածն մի կայ Վոկիւէի գրչէն, Բարիզի Ռըվիւ տէ Տէօ Մոնտի մէջ Մեք այդ յոյժ հետաքրքրական յօդուածին շատ սեղմեալ համառոտութիւնն կուտամք ՀԱՅՔի ընթերցողաց։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

«ՀԱՅՐԻ»

(Շար. և վերջ, տես նախորդ թիւն)

Զ. Հոս Հայկական հոգեբանութեան այն կարեւոր և խրթին հարցն կը ներկայանայ թէ ո՞յք են հայ Հոգւոյ լաւ յատկութիւնքն ու ազնիւ միտումներն —ի՞նչպէս կը լինի ճշմարիտ տիպար Հայն։ Այդ հարցի կարելի է պատասխանել անձնական դիտողութեան և օտարաց վկայութեան յենլով. բայց աւելի հաստատուն կը լինի ապացուցութիւնն եթէ ազգային հոգւոյ գործոններն, միջավայրի, կլիմայի, Հայաստանի բնագրական կազմութեան տպաւորութիւններն ինչպէս նաև Հայոց ընտանեկան և քաղաքական կենաց և կրօնական հաւատոյ ազդեցութիւններն ի հաշիւ առնուին։ Ես պիտի շատանամ մի քանի համառօտ դիտողութեամբք։

Մարդկութեան լաւագոյն ցեղերն լաւագոյն կլիմայից մէջ յառաջ կուգան։ Ամբողջ բնութիւնն վարժարան մ'է, բայց նորա զանազան դասարաններն չեն հաւասարապէս լաւ։ Բնութիւնն ուրեք տափակ և անոգի կ'երեւի, ուրեք խարխրդաւոր և վսեմ։ Հայաստանի ֆիզիքական կազմութիւնն գերազանց յարմարութիւն ունի արութիւն և այլ հոգեկան ազնիւ զգացումներ զարթուցանելու իւր բնակչաց մէջ։

Ճշմարիտ Հայուն առաջին յատկութիւնն է արութիւն։ Ոչ միայն Հայուն, այլ և ամեն զարգացած ազգի առաջին յատկութիւնն է այդ. երբէք ազգ մի չի կրնար բարձրագոյն առաքինութիւններ մշակել առանց նախապէս արիացած լինելու։ Արիութիւնն ազնուագոյն յատկութեանց համար է ինչ որ ներկարարութեան արհեստին մէջ խածան (mordant) նիւթն է տրուելու ներկին համար. խածանն է որ մանածն ընդունակ կ'անէ ներկն բռնելու և պահելու. նմանապէս արութիւնն է այն ընդհանուր խածանն որ ազգերն ընդունակ կը գործէ պէս պէս ազնիւ երանգներ առնելով փայլելու։

Եւ յիրաւի Բնութեան և մարդկային Հոգւոյն միջեւ նախահաստատեալ զարմանալի ներդաշնակութիւն մի կայ որոյ շնորհիւ ազգայ մարդկութիւնն արութեան դասն կը ստիպուի սովրիլ իբրեւ առաջին դաս։ Մանուկ մարդկութիւնն Բնութեան ոչ փափկութեանց այլ զօրութեանց կը դնէ ուշ։ Այն որ սքանչելի ծաղկանց վերայէն կ'անցնի առանց սքանչանալու, ամպոց ահաւոր որոտմանց կը մտադրէ ահիւ։ Մեծ Մանկավարժն անկիրթ և անզգայ մարդկութեան դաս տալ սկսած է ուրեմն պոռալով, երբեմն գաւազանի հարուածներ տալով, և աշակերտն, որ նրբութեանց անուշադիր և անզգայ էր, բնութեան ահաւոր և զարհուրեցուցիչ երեւոյթներուն առջեւ խոհուն ու լուրջ կեցած՝ ասաց. «կորոտա՜ն, կը չանթահարե՞ն, ո՞յք են Հզօրքն...» Մարդն նախ այդպէս սկսաւ փիլիսոփայել և պաշտել։ Զանաց նմանիլ իւր ասուածոց, լինիլ աներկիւղ, ահաւոր, արի։ Երկար դարեր այդպիսի երեւութից ընտելանալով և ի պատերազմունս գործածելով իւր արութիւն, կրթուեցաւ, ուսաւ առաջին դասն։ Քաղաքակրթութեան մէջ զարգանալ ըկսած ազգաց առաջին խէսականն է արութիւն, և առաջին դիւցազունքն էին արիներն։

Հայք ալ արութիւնն են արած իրենց առաջին խէսական։ Հայերէնի մէջ «արի» և «այր» նոյն բառ են և նոյն բան են։ Խորենացին առաջին Տիգրանայ վերայ խօսելով կ'ասէ. «արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ,» որպէս թէ մատնանիշ անել ուզէր «այր» և «արութիւն» բառերուն նոյնութիւնն։ Յաչս հին Հայոց մարդ չէր նա որ արի չէր։ Այսօր ալ, կը կրկնեմ, տիպար Հայն նախ և առաջ արի է։ Կը տեսնե՞ս Հայ մի որ վախկոտ է, կրնաս վստահ լինիլ թէ նա ուրիշ ոևէ առաքինութիւն չունի, և ինչ որ ունենալ կը ցուցնէ կեղծ է։ Միթէ կարելի՞ բան է երկրորդ և աւելի բարձրագոյն յարկեր կառուցած լինիլ առանց առաջինն շինած լինելու. կամ հնարաւո՞ր բան է որ բարձրագոյն առաքինութիւնք փլած չլինին երբ անոնց հիմն եղող ժայռն լուծեալ քայքայեալ է։

Ճշմարիտ Հայն արի է, և աւելի քան

արի է։ Նա զգօն և լուրջ է։ Դիմօք խոհուն կ'երեւի և իրաւ ալ խորհող է մտօք։ Այսու լոկ իմացական բարձր ընդունակութիւն ունի ասել չեմ ուզեր, զայդ ունի, բայց աւելի ազնիւ և բարդ յատկութիւն մ'է այն զոր կը բաղձամ նշանակել «զգօն» և «լուրջ» և «խոհուն» բառերն միասին գործածելով։ Պարզապէս իմացականութեան յատկութիւն մի չէ այն, այլ և սրտի։ Զգացումն սուր և փափուկ է, տրպաւորութիւնքն խոր և տևական։ Բնութեան առջեւ Նորա Հոգւոյն թելերն դիւրաւ կը թրթռան, Նորա սիրտ ի խորոց կը հնչէ։ Զգայուն է վսեմին, ճշմարտին և բարւոյն որպէս սակաւք ի մեծ ազգաց եղած են։ Բնութեան, աշխարհի և կեանքի մէջ կը զգայ գաղտնիքներ և կ'ունենայ հոգեկան այնպիսի ներշնչումներ որովք աւելի սուրբ և վսեմ կը դառնան յաչս իւր ամենայն ինչ, և այդ է պատճառ իւր խոհուն և լուրջ երևնալուն։ Նորա զգօն և լուրջ և յաճախ մելամաղձոտ դէմքն քաղաքական ազէտներու և ընտանեկան հոգերու ազդեցութեան բոլորովին ընծայել սխալ է. նա իւր անցեալ երջանիկ դարերու մէջ ալ լուրջ և զգօն եղած է։ Հայն Հայաստանի հարազատ զաւակն է, անոր նման վսեմ և խորհրդալից։ Ահաւոր փոթորիկներ, գետերու որոտագոչ հոսանքն, Մասեաց վեհ կերպարանն և նմանօրինակ վսեմ երեւոյթներ դիտող և անոնցմէ դարէ ի դար ներշնչուող ընդունակ ցեղ մի չէր կրնար ծանծաղամիտ և անսիրտ լինիլ։ Հայն զգայուն և զգօն Մօր լուրջ և խոհուն զաւակն է։

Եւ աւելի է քան զայդ։ Հայու ազնիւ տիպարն ունի պատկառելու, սքանչանալու, հիանալու ընդունակութիւն բարձրագոյն չափով։ Մատաղ հասակին մէջ նա ամէնկոտ է, որ ամենեւին վախկոտութեան նշան չէ այլ զգայուն և նուրբ տրամադրութեան, որով մեծերուն մեծութիւնն կը զգայ և անոնց յարգանք կը մատուցանէ պատկառելովն։ Պատանի հասակին մէջ նա արի, ազնիւ, ընտիր աղգայիններըն իւր խորին սքանչանաց առարկայ կ'անէ և կը պաշտէ. դիւցազնապաշտ է։ Այս ալ իւր դերաղանց հոգւոյն մէկ ապացոյցն է։ Աւելի հասուն և զարգացած հասակին մէջ թէպէտ այս կամ այն աղգայնոյ մէջ դեռ կարենայ իւր իտէականն իրականացեալ տեսնել կամ ոչ, դարձեալ իտէականի ջերմ հաւատացեալ մ'է, և դիւցազնապաշտութենէ կը վերանայ իտէալապաշտութեան։ Ինքն իսկ դիւցազնանալու կը ձգտի յանդգաստից։ Ինքն գիտակից լինի կամ ոչ, բարետես (optimiste) է բնութեամբ, այսինքն աշխարհի և կեանքի ազնուութեան, Բարւոյն վերջնական յաղթանակին կը հաւատայ։ Թէև իւր բարեսես անկնկալութեանց և իտէական ըմբռնմանց չեն պատասխաներ իրականութիւնք և յաճախ դառն յուսախաբութիւններ կ'ունենայ, ու տխուր կ'երեւի, սակայն և այնպէս երջանիկ մարդ է նա ի խորս հոգւոյն։ Կեանքն զբօսանք մի չէ յաչս նորա, այլ իւր պարտքերն չարաչար աշխատանօք և խղճմտութեամբ կատարելու մէջ անպատմելի գոհացում կը գտնէ։ Իբրեւ արհեստաւոր քիչ կ'արտադրէ՝ քաջ կը շինէ, գժուարահամ է գործնական կեանքի ամեն շրջանաց մէջ և ամեն ինչ կատարեալ տեսնել կը բաղձայ—արդիւնք իւր իտէալապաշտ բնաւորութեան։ Նորա Հոգին ամեն բանի սքանչելին կ'ուզէ։

Այս իւր պաշտող Հոգւոյն մեծ ներշնչողն ու դաստիարակն է Բնութիւնն, Հայաստանի սքանչելի Բնութիւնն։ Հայաստանի նեմ անտառներուն, սխրալի հովտաց, խոր ձորերուն, ահեղահոս գետոց, փառաւոր երկնակամարին և վսեմ լերանց ազդեցութիւնքն մեծ դեր կատարած են զՀայն անելու սքանչացող հոգւոյ տէր։ Հայաստանի վսեմութեանց վրսեմագոյնն է Մասիս լեռն, նա է հայ երկրին բարձրագոյն և ազնուագոյն ներկայացուցիչն։ Եւ ի՞նչ սքանչելի է նա, ի՞նչպէս մարդուն սրտին մէջ հրաշիւք իմն կը զարթուցանէ զգացմանց, յուզմանց, մտածութեանց լաւագոյններն։ Օտարական ուղեւորք ալ կը վկայեն մեր Սուրբ Արարատի այդ Հոգեշէն զօրութեան։ Մատամ Շանդռ կը գրէ թէ մեր մեծ լեռան ներկայութեան «մարդս կը զգայ թէ ի լաւագոյն կը փոխուի, և հոգին՝ երախտագիտութեամբ լեցուն՝ կը բարձրանայ դէպ յԱրարիչն այդ ամեն սքանչելեաց։»

Այո՛, Մասիս, որոյ գլուխն ամպերով պսակեալ է, երկնից հետ կապակցութիւն ունեցող քերոբէի մի նման՝ իրեն դիմող մարդիկն վեր կը բարձրացունէ և Արարչին ներկայութեան կը հանէ։ Քանի՞ քանի՞ դարէ ի վեր նա այդ միջնորդութիւն կատարած է Հայաստանի ու Դրախտին

միջև, և ո՛րքան Հայ Հոգիներու մէջ սըրբած և բարձրացուցած է կրօնական զգացումն, նոյն իսկ հեթանոս դարուց մէջ, և մանաւանդ յորմէ հետէ քրիստոնէութիւնն եղած է մեր Ազգին հաւատքն։ Վսեմ լեառն ո՛րքան վկայութիւն տուած է վսեմ կրօնին ի նպաստ։ Հասարակ ժողովուրդն չի կրնար ուսեալ և կրթեալ անձանց նըման արտայայտել իւր ներշնչումներ, բայց քանի՛ բիւր Հայ կանանց և արանց զգացումն կը բացատրէ Ֆռանսացի ուղեւորն երբ կ՚ասէ թէ Մասիսի առջեւ զգաց ինքզինք լաւագոյն եղանիլ և հոգին երախտագիտութեամբ ճախրեց դէպ յերկինս։ Հացալից սեղանէն կուշտ փորով ելնող Քիւրդն ալ «փառք քեզ Աստուած» կրնայ ասել. բայց յոյժ բարձր Հոգւոյ ապացոյց կուտայ Հայն երբ պարզապէս ի զնին կեցած վսեմ ու փառաւոր Մասեաց՝ կը փառաւորէ զԱրարիչն երախտագէտ զգացմամբ։

Ինչպէս է Մասիս, այնպէս է Հայութեան բարձրագոյն տիպն. երկուքին ալ տեսութեան հորիզոնն անհուն է, երկուքն ալ լուրջ, բարձրախոհ, հեռադէտ և երկնամերձ են։

Հայու սքանչացող, պաշտող Հոգին իւր մեծագոյն փառքն և յոյժն է։ Նորա Հոգւոյ Հոգին է կրօնական զգացումն։ Անոր համար ասացի թէ անկրօն և անպարիշտ Հայն «հայ» չէ։ Հայաստանի բընութենէն հեռու՝ յոյժ մոլորեցուցիչ կըրթութիւն պէտք է առած լինի որ Հայ տիպն իւր երկնամերձ բարձրութենէն իյնայ յանկրօնութիւն։։

Բովանդակելով այս յօդուած՝ կըրկեմք ուրեմն թէ Հայութեան ճշմարիտ տիպ եղող Հայն արի է և բարի, ամուր և փափուկ միանգամայն, աղնուագունին, սքանչելոյն և իտէականին զգայուն է և յարող ի խորագոյն խորոց սրտին, այնպէս որ ամեն տեսակ զարգացման ծարաւի և միշտ դէպ ի բարձրն ձգտող է։

Է. Հայկական Հոգւոյ յատկութեանց մասին ինչ որ նկարագրեցի նախորդ յօդուածով, ազգն քաջ ուսումնասիրողաց համար անվիճելի պիտի երեւի, եւ ես կարող էի աւելի երկարօրէն հաստատել ամեն ինչ եթէ տեղն ներէր։ Ի հարկէ Հայկական ճշմարիտ տիպ եղող անհատներն կաղապարի մի վերայ ձուլուած համանման էակներ չեն, անհատական պէսպիսութիւնք անհուն են։ Նաև ճշմարիտ տիպերու աստիճանք անթիւ են։ Ի հարկէ բարձրագոյն տիպն յոյժ հազուագիւտ է, իսկ միջին տիպն բազմաթիւ ներկայացուցիչներ ունի, թէև շատք անծանօթ և անմշակ կը մնան ի չգոյէ բարեդէպ պարագայից։

Այսչափն ալ բաւ է ցուցնելու թէ որքան սխալ է խստաւորեալ Հոգիներու յատկութիւններն բոլոր Ազգին բարացուցական նկատել։ Երբ մեր մէջ անմիաբանութեան, նախանձու, քսութեան, մատնութեան գործեր պատմուին, յաճախ կը լինի այն անգէտ և անիրաւ դիտողութիւնն թէ Հայութեան պտուղներն են անոնք, թէ այնպէս կը լինի Հայն։ Ո՛չ, հազար անգամ ո՛չ։ Քսուք, մատնիչք և նմանք Հայութեան պտուղ չեն այլ վիժածք. նոքա պարտիզին փչերն են, ոչ ծաղկունք. տնկոց կերքն են, ո՛չ տունկք։ Ազգն դատելու համար պէտք է նայիլ նորա հզօր, հարազատ տիպարաց, նոցա՝ որք Հայկական Հոգին ճոխապէս ժառանգած են, որք, այլով բանիւ, Ազգային Անցեալն կը ներկայացուցանեն կամ մեռած սերունդներու կենդանի ներկայացուցիչն են։ Ոչ ցեղային անունն ու արիւնն, ոչ իսկ ազգային երկար գործունէութիւն և բարձր պաշտօններ կը բաւեն Ազգային ներկայացուցիչ գործել այն անհատն յորում անցեալ սերնդոց լաւագոյն Հոգին չ՚ապրիր։ Բառին խորագոյն իմաստիւ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՅՈՒՑԻՉ է այն անհատն որ մեռեալ հարց և անցեալ դարուց ազնուագոյն միտումներն առատօրէն ժառանգած է։ Այնպիսին կը զգայ, կը խորհի և կը գործէ որպէս անցեալ սերնդոց պատուականագոյն անհատներն պիտի անէին եթէ հրաշիւք իմն կենդանանային և ներկայի իրականութիւններն տեսնէին։ Այնպիսի անհատի տեսութիւնք այնքան ճշմարտիւ ազգային են որ երբ իւր հարազատ ազգայինք կը լսեն, իրենց այնպէս կը թուի թէ բուն իսկ իրենց ազօտ խորհրդոց յստակ բացատրութիւնն կը լսեն— թէ նա իրենց բերանն է։ Ուրեմն նա կրկին իրաւամբ ազգային տիպ և ներկայացուցիչ է. նախ այնու զի մեռեալ սերնդոց լաւագոյն զգացումներն կը ներկայացունէ, և երկրորդ այնու զի ապրող սերնդին ազնուագոյն անդամոց խորհուրդներուն տեսանողն մարգարէն ու բացատրիչն է։

Ը. Ազգային ճգնաժամուց և կարեւոր երկունքի մէջ մանաւանդ երեւան կուգան մեծագոյն ներկայացուցիչը, Ազգային հըզօրագոյն տիպը։ Ազգի մի զօրութեանց այն կարեւոր մասն որ սերնդէ ի սերունդ կը փոխադրի առանց լիովին դուրս ելնելու, և հին դարուց ազնուագոյն անձնաւորութեանց կորովն որ զանազան ընտիր ընտանեաց մէջ, խոնարհ կերպարանաց տակ թաքցուած կը պահուի, ճգնաժամուց ատեն երեւան կ'ելնէ։ Բնախօսական ժառանգութեան օրէնքներն չեն արգելուր մինչև իսկ ենթադրել թէ ներկայի անհատներու մէջ կան թերեւս որք ֆիզիքական կազմութեամբ ճշգրիտ պատկերքն են դարեր առաջ ապրած այս կամ այն դիւցազին։ Պատեհ առիթք, կրթութիւն, ճգնաժամական տարիներու յատուկ սաստիկ յուզմունք կը ցնցեն ազգային բարձր տիպի բոլոր զօրութիւններն և կ'արթնցուներն։ Նա անսովոր արագութեամբ ի ներքուստ կ'աճի և հսկայի համեմատութիւններ առնլով կը կրէ իւր ժողովրդի բեռն, ցաւն, հոգերն, և որքան աւելի կրէ ժողովրդի տկարութիւններն, այնքան աւելի կը հզօրանայ, և որքան աւելի զգայ իւր սիրելի Ազգին ցաւերն, այնքան աւելի կը սրբանայ և կ'ազնուանայ։ Զ յօդուածի մէջ յիշուած հայկական յատկութիւններն նորա Հոգւոյն մէջ ամ ըստ ամէ իրենց բարձրագոյն աստիճաններուն կը հասնին և նա վերջապէս կը դառնայ արտակարգ անձնաւորութիւն։ Ո՛ւր որ գտնէ իւր ճշմարիտ ազգայիններն, Ազգի հարազատ և ազնիւ զաւակներն, ջերմագին սիրով կը թխսէ նոցա վերայ և կ'աշխատի ժողովրդի փրկութեան գործոններ հանել անոնցմէ։ Սուր՝ երբեմն հրեղէն բարկութեամբ կը շանթահարէ խաբեբայ ներկայացուցիչներն։ Յոյժ խոնարհ է և սակայն կարի հպարտ կ'երեւի, իշխանութիւն չունի բայց և այնպէս իշխանօրէն կը յանդիմանէ, պաշտօն չէ յանձնուած նմա, և սակայն բիւրաւորաց ներկայացուցչի պէս կը խօսի։ պզտիկ է և մեծի դեր կը կատարէ։ Այդպէս է իւր վարք, բայց մեծ երեւելու հետամուտ չէ, և չի մտածեր իսկ թէ ինքն մեծ մէկն է, այլ հզօրի դեր կը կատարէ գրեթէ բընազդմամբ, առանց հաշուոյ։ Իւր հաշիւք սխալ են աշխարհի կանոններով, նա յիմար մարդ է յաչս սխմարաց, իսկ յաչս կեղծաւորաց և սուտ արանց՝ ազգին թըշնամի և հայրենեաց վտանգաւոր գարշելի մ'է զոր պէտք է բառնալ ի միջոյ։

Թ. Ուրեմն Ազգի ճշմարիտ ներկայացուցիչն պատմական կարեւոր ժամանակաց մէջ բնազդմամբ կը մտնէ գործի ասպարէզն։— Նա է ԱԶԳԱՑԻՆ ՃՇՄԱՐԻՏ ԳՈՐԾԻՉՆ։ Ցանդիմանեալ փարիսեցի գործիչներ շատ կ'աշխատին ամբոխին միտքն մոլորցուներլու և անիսելահասից առջև զնա անգոյն, փոփոխամիտ ներկայացուներլու։ Ցաչս նոցա երբեմն յեղափոխական կ'երեւի նա և երբեմն խաղաղասէր, մերթ ազատական և մերթ պահպանողական, միանգամ հին եկեղեցւոյ յարած և միւսանգամ անկէ հեռացած, .ատի անկրօն և անտի կրօնասէր, օր մի հին լեզուին սիրող և ուրիշ օր մի նորոյն։ Ուրեմն նա որոշ դաւանութիւն չունի, կասեն, հնոյն և նորոյն միջեւ կը տատանի։ Ո՛չ, ո՛չ, նորա ուղղութիւն որոշ է և նորա փոփոխումն ամ քան զամ զարգացողի փոխակերպումն է։ Նա ժողովրդին պիտոյքներն քաջ կը զգայ և իւր գիտակցութիւնն առանց ինքն իրեն հակասելու կը զարգանայ դէպքերու շըրջափոխութեան համաքայլ։ Կը փոփոխի ուրեմն այդ իմաստիւ, բայց ինքն իրեն չի հակասեր, ինչպէս երիտասարդութիւնն չէ պատանութեան հակասութիւնն այլ զարգացումն։ Ազգային Գործիչի հայեցողութիւնք նոյն ոգին և նոյն ուղղութիւն ունին ի սկզբանէ մինչև ցվախճան, բայց ոչ մի և նոյն լիութիւնն ու կատարելութիւնն։

Գ. Յօդուածի մէջ ասացի թէ «Հայոց կրօնն, լեզուն, գրականութիւնն, կառավարական յարադրութիւնն՝ ամենայն կը կրեն Հայ Հոգւոյ դրոշմն եթէ իրօք ազգային են կամ ազգային դարձած են։» Ճիշդ նոյնն ճշմարիտ է Հայ Հոգւոյ մարմնացումն եղող գործիչին համար։ իւր ուսումնասիրութեան նիւթ եղած կրօնական, քաղաքական, լեզուական, գրական, կրթական և այլ ամենայն խնդրոց վերայ կը կազմէ տեսութիւններ որք խորին համաձայնութիւն մ'ունին իրարու հետ, այն պատճառաւ որ բոլորն ալ ներշնչեալ են, կամ եթէ կ'ուզէք, արտաշնչեալ են նորա Հայկական Հոգիէն։ Նա, իւր զարգացած հասակին մէջ, ճշմարիտ հեղինակութիւն է, և այնպիսին միայն կրնայ լինիլ ճշմարիտ հեղինակութիւն։ Նոր կառավարական յարադրութիւն, ճշ-

մարտապէս նոր գրական կամ իմաստասիրական դպրոց, իրական բարեկարգութիւնք այնպիսւոյն ազգային հանճարէն միայն կը ծնանին։

Ժ. Հայկական Հոգւոյ հզօրագոյն մարմնացումն եղող Գործիչն, իւր հասուն և զարգացեալ լիութեան մէջ, աւելի է քան կարացի նկարագրել ցարդ։ Նորա բուն ԵՍն զգացումներն են, կիրքն, սէրն, կրօնն, իսկ իմացականութիւնն, վարդապետութիւնն, քաղաքական հայեցողութիւնն, ազգային դաւանանքն ու կրօնական հանգանակն այդ զգացմանց արտաշնչութիւնքն միայն են։ Նորա բոլոր ըղձից ու ձգտմանց անդրագոյն նպատակն է Ճշմարտին յաղթանակն ու Բարւոյն տէրութիւնն ընդ հանուր։ Նա ո՛և է հըրապոյր, ո՛և է խոստում չ՝ընծայեր իրեն քաշելու համար զայլս, զի գիտէ թէ անօգուտ և վնասակար իսկ է այնպիսի հետեւողներ ունենալ որք հոգեկան խնամութիւն չունին իրեն հետ։ Իւր ջանքն է ուրեմն ոչ թէ կուսակիցներ այլ հոգեկիցներ շատցունել. ոչ թէ շրթունքներու այլ սրտերու ազդել։ Եւ արդարեւ իւր կեանքն ու վարքն հրաշալի ազդեցութիւն ունին իւր հայրենակցաց լաւագոյն միտումներն զարթուցանելու, ազնուագոյն զգացումներն դրդռելու։ Կենաց խցեալ աղբիւրներն կը բանայ նոցա սրտերուն մէջ։ Մեռեալին չի կրնար հոգի տալ, բայց բարձր կենաց թաքուն ծիլն կրողամեն ազգայնոյ մէջ ճշմարիտ կեանք կը ծնի, և այս եղանակաւ նա որպէս թէ ինքզինք բազմապատկած կը լինի՝ իւր նըմաններն շատցունելով։ Ազգային Հոգին նորա մէջ է, և ազգային մարմինն անկէ կեանք և հոգի կ՝առնու.— Նա է ԱԶԳԱՑԻՆ ՎԵՐԱԾՆԻՉ։

ԺԱ. Գործիչի բարձրագոյն տեսակն՝ ուրեմն՝ Ազգին բարոյական զգացմանց սրբարար վառարանն է։ Նա հոգիներու մկրտիչ և սրբիչ է, և այդ պատճառաւ ալ իւր գործն դժուար է յոյժ։ Փարիսեցիք նորա վարքն ու վարդապետութիւնն կը խծծեն. եթէ դեւ իսկ հանէ, դիւաց իշխանաւն հանեց՝ կ՝ասեն։ Շատեր, այսինքն անանք որոց մէջ ազգային բնազդմունք տկար են, այդպիսի կոչտ իմաստակութիւններէ կ՝ազդուին և Ազգին Որդին կ՝անարգեն։ Ի սկզբան կարի սակաւք կը հետեւին նմա. եւ եթէ տասներկու հոգի աշակերտին, մին Յուդա կը լինի։ Անկարելի է սակայն որ ՈՐԴԻՆ չյաջողի. նորա յաջողութիւն շատ աւելի ընդարձակ և խոր է քան թշնամիք և բարեկամք կարեն հաւատալ։ Ի հարկէ Ազգային Ազատարարի կեղծ ու պատիր տիպարներ ևս նոյն միջոցին կ՝ելնեն յասպարէզ, և անհարազատ ազգայինք այնպիսեաց ետեւէ կը վազեն, ախմարք անիմաստ հնչիւններու կը շականջեն և Հոգւով անանկացեալք կը շլանան փքացուռոյց մեծութեան փայլէն։ Սակայն և այնպէս յետ երկար մրցմանց և բազում վարանմանց, ամեն ազնուք որոց մէջ ազգային լաւագոյն զգացմունք մարած չեն, կը լսեն Որդւոյն ձայնին իբրեւ իրենց ճշմարիտ եղբօր և կը ժողովին նորա Արարատաբերձ դրօշու ներքեւ։

ԺԲ. Այսպէս ցուցնել ջանացի, Հայե՛ր, թէ ի՛նչ է ճշմարտիւ Հայ Հոգին, և անոր ընդհանուր նկարագիրն Զ Յոդուածի մէջ տալէ յետոյ՝ յաջորդ յօդուածովք զնոյնն աւելի պարզել աշխատեցայ Հայ Հոգւոյ մարմնացումն եղող ներկայացուցչին, գործիչին, վերածնող Ազատարարին շրջափոխութեանց մէջ, բարձրանալով աստիճանէ առ աստիճան ամէկոտ մանուկէն, դիւցազնապաշտ պատանիէն, խոյալապաշտ երիտասարդէն մինչեւ զարգացեալ գործիչն ու հզօր փրկիչն։ Հին և նոր պատմական անուններ չտուի, բայց կըրնայի տալ. մեծ Ազատարարի մասին ալ կը հաւատամ թէ Ազգն կարող է հանել զայն ինչպէս կարող եղած է հանել կարապետներ։ Ես կը հաւատամ թէ Ազգին մէջ հայկական Հոգին բաւական կենդանի է, թէպէտ իբրեւ յընձիւղի, և պիտի կըրնան ելնել հզօրագոյն մարմնացումներ Հայկական Հոգւոյն որք պիտի հանդիսանան ազգային փրկիչ։ Այո՛, այդ մտօք խորապէս ճշմարիտ է թէ մեր ազգին փրկութիւնն իրմէ պիտի լինի և ոչ թէ օտարէն. փրկիչ պէտք է որ գործուի փրկութիւն, և փրկիչն Հայոց ծոցէն, Հայաստանի զաւակներէն միայն կրնայ ելնել. նա միայն կրնայ հասկանալ Հայերն և առաջնորդել հայկական ուղղութեամբ, իսկ օտարամիտ Հայեր կը սպաննեն նոցա Հոգին, ինչպէս օտարք կը սպաննեն նորա մարմինն։

Այս ուսումնասիրութիւն, թէպէտ յոյժ համառօտ, բազում եզրակացութիւններ կը թելադրէ Հայ Ազգին վերաբերեալ ամեն տեսակ խնդրոց վերաբերութեամբ։ Նշանակեմք մի քանիք։

(1) Քան զամենայն կարեւոր և թերեւս նոր բան է այն թէ մեր ոյժն մեր Հոգւոյն մէջ է։ Հայկական հոգին, որպէս նկարագրեցի, ահագին զօրութեամբ լեցուն երիտասարդ հոգի մ'է, ճիշդ այնպիսի յորմէ արդար է սպասել բարձրագոյն բանաստեղծութիւն, խոր իմաստասիրութիւն, նոր գրականութիւն, քաղաքակրթութեան ազնիւ տարրեր և սքանչելի դիւցազնական գործեր։ Հայ Հոգին՝ ծերացած, յուսահատ, չուարած և թուլցած Եւրոպայի կրնայ յոյս և հաւատք ու կեանք տալ։ Հայու նման Ազգ մի միայն կարող է Եւրոպեան հինցած քաղաքակրթութիւնն անկումէ ազատել կամ անոր արժանաւոր յաջորդ ծնանիլ։ Մեր պարծանքն մեր անցեալի պատմութիւնն չէ, այլ ապագային պիտի լինի։

(2) Հայաստան, իբրեւ երկիր, շատ աւելի պատուական է քան ընդհանրապէս կը կարծուի։ Հայ Հոգւոյ գործօն եղած է այն յանցելումն, անոր լուսագոյն պահարանն է այսօր և անոր լուսագոյն սպարէզն պիտի լինի յապագային։

(3) Ազգին ապագայն փրկելու համար մեր առաջին պարտաւորութիւնն է Հայկական Հոգին փրկել վէրքերէն, զառամեալ Եւրոպիոյ յուսահատական և նիւթապաշտ մոլորութիւններէն։ Պէտք է վեհ։ Հայրապետն և բոլոր ազգային դործիչք, հեղինակք, վարդապետք, ուսուցիչք միջոցներ ձեռք առնուն մշակելու ազգային դաստիարակութեամբ, զօրացուցնելու հայացեալ գիտութեամբք և ուսմամբք զՀայկական Հոգին որպէս զի կարենայ դիմանալ արտաքին ճնշմանց և քայքայիչ մոլորութեանց։

(4) Մեր իտէալն է զՀայաստան գերազոյն քաղաքակրթութեան մի վառարան գործել՝ Հայկական Հոգին պաշտպանելով, զօրացունելով և անոր արգասաւորութեան ասպարէզ ընծայելով ինքնօրէն հայրենիքն։

ՊԱՐԶ ԽՕՍՔ

Ո՞վ չգիտէ թէ հայ ազգի բազմամարդ կեդրոններուն մէջ ազատ մամուլ չկայ, և մօտ ապագային մէջ լինելու յոյս ալ չկայ։

Ո՞վ չգիտէ, հետեւապէս, թէ մեր ազգային-քաղաքական խնդիրներն ուսումնասիրող մամուլն ի հարկէ ազատ երկրաց մէջ պիտի ապրի։

Ո՞վ չգիտէ՝ վերջապէս՝ թէ հայ փոքրիկ գաղթականութիւնք լրագրի նիւթական սպարէզ չեն ընծայեր, քանի որ նոյն իսկ Կ. Պոլիսն, Տփղիսն և այլ հայաշատ գաղթական կեդրոններ հազիւ կը-նան ապրեցուցնել իրենց թերթերն։

Այս ամենն պարզ են և գաղթականութեանց մէջ մի զմիոյ կնի երեւան ելած ու աներեւոյթ եղած թերթերն նոյնքան փաստեր են զայս ապացուցանելու։

Արդ, սա պարզ հարց կը դրուի գաղթականութեանց առջեւ—թող պիտի տա՞ք որ «Հայք» թերթն ևս աներեւոյթ լինի։

Իրա՞ւ է ինչ որ ատի անտի վկայեցին գիտուն ազգայինք թէ «Հայք» ճշմարիտ ծառայութիւն մի կը մատուցանէ Ազգին և թէ բուռին բարձր նշանակութեամբն հայ ազգային թերթ մ'է այն։ Ստո՞ւգ է թէ մշակեալ երիտասարդութիւնն չ'ամաչեր զՀԱՅՔ իւր բերան կոչելու։

Եթէ ստոյգ են այս ամենայն, ուրեմն մի' թողուք որ «Հայք» դադարի։ Մասնաւորապէս դժուարին տարի մ'է 1894թուականն, և մասնաւոր ջանք ու զոհողութիւն պէտք են ներկայ ճգնաժամն անցուցնելու համար։

Տարւոյն պահանջն, սպառնացող վըտանգն դրի առաջի, որպէս պարտ անձին համարեցայ, զի արդարեւ իրաւունք չունիմ դադրեցուցնելու թերթ մի որ ազգային ձեռնարկի համարումն ու համակրանքն կը վայելէ կարգ մի լուրջ ազգայնոց առընթեր, և կրնայ այնքան դիւրութեամբ ընդունիլ իւր պէտքն աւելի բազմաթիւ համակրողներէ։

«ՀԱՅՔ» անմիջական օգնութեան պէտք ունի։

ՕՏԱՐ ԿԻՆ ՄԻ

ՀԱՅԱՏԱԾ

Հայ մի, հազարաւոր Հայեր, օտարացած տեսնել շատ տեսած է աշխարհ։ բայց օտար մի հայ եղած գտնել՝ յիրաւի բացառիկ երեւոյթ մի, հրաշք մի տեսնել է։ Այդպիսի հրաշք մ'է Տիկին Թումայեան։

Մարզուանի Ամերիկեան գոլէճին ուսուցիչներէն միոյն, Տէր Թումայեանի, կինը՝ է այդ ճշմարիտ կին, որ իւր առն «կենակիցն» լինելով՝ ի սրտէ հաղորդ է նորա ազգային խորհրդոց, ըղձից ու վըշտաց։ Երբ դիւաչունչ թուրք պաշտօնեայք զԹումայեան չղթայիւք ծանրաբեռնած նետեցին ի բանտ իբր ահաւոր ոճրագործ և ապա կառավարութիւնն ի մահ դատապարտեց զնա, Տիկինն՝ ամուսնական սիրով և անձնուիրութեամբ սպառազէն՝ դիմեց անգլիական նախարարաց, և զիւր սիրելին առիւծիւց ժանիքէն պրծելու համար շարժեց զերկին ու զերկիր։ Ահա ճշմարիտ ամուսին, ահա քաջ կին։

Եւ այժմ որ այրն ազատած է, նորա հզօր աջակիցն է յԱնգլիա հանրային կարծիքն ի նպաստ Հայոց յուզելու։ Նա կը գգայ թէ հազարաւոր անմեղներ կան դեռ ի բանտի, բիւրաւոր հայ եղբայրներ Թըրքի տաժանակիր լծին տակ, և իւր առն ձայնակցելով կը բողոքէ, կը նկարագրէ և կը համոզէ։ Անգլիական թերթերու մէջ կը կարդամք թէ նորա հրապարակախօսութիւնք մեծ հետաքրքրութեամբ կը լսուին և խոր տպաւորութիւն յառաջ կը բերեն։ Տեղեկագրութիւն մի կ'ասէ թէ Տիկինն հայ կնոջ գեղեցիկ հագուստով ներկայացաւ խօսելու. «Ինքն, Տիկինն, ալ յոյժ գրաւիչ էր և իւր պատմութիւնն պատմեց դիւթիչ եղանակաւ։...Սարսուռ ընթացաւ ունկնդրաց յոտից ցգլուխ ի լուր քստմնելի իրողութեանցն։ Նկարագրեց նաև սարսափելի տառապանքն զորս կրած էր իւր այրն Պատ. Թումայեան։»

Հայ ուղեւոր մի որ վերջերս պատեհութիւն ունեցած էր Տիկին Թումայեանի հետ տեսակցելու ի Լոնտոն, պատմեց մեզ թէ Տիկինն ուխտ արած է ցյետին շունչ տալ իւր կեանքն ի փրկութիւն Հայ Ազգին որ իւր սիրելի ազգն է այժմ։

Կեցցէ՞ Տիկին Թումայեան։ Եւ թող մեր հայ ծնեալ Տիկնայք և Օրիորդք ներշնչուին այդ հայրենասէր Հայուհւոյ անձնուէր օրինակէն։

ՀԱՅԿ

ԼՐՆԴԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23d St.,
New York,
U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն

ՊԱՏՄԱՆՔ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրի համար
երկու տոլար կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՑԵՏՀԱՑԵԱՑ ԱԿՆԱՐԿ ՄԻ

ՌՈՒՍ ՁԱՐՀՈՒՐԱԿԱՆՔ

LES TERRORISTES RUSSES

Ներկայ ժամուս անիշխանական բռնութիւնք ինձ 12 կամ 15 տարի առաջուանն յուշ կը բերեն։ Նոքա որ ի Բեռլէրսպուրկ ապրած են 1878 և 1882 տարիներու միջոցին, գգալու են թէ լաւ ճանչուած թատերախաղ մ'է որ այսօր ուրիշ տեսարանի վերայ կը ներկայացուի։ Ամեն ինչ որ դիտելի է այսօր ի Բարիզ հանրային ոգւոյն շարժմանց մէջ, երկիւղ, մտատանջութիւն, յիմարումն, ոմանց գրեթէ մեղսակցական զգայականութիւնն և այլոց այլ ևս մուռ անել չկրցող ցասումն, այդ ամենն դիտած եմ Բեռլէրսպուրկի ընկերութեան մէջ ի վերջկոյս Աղէքսանդրը Բ. ի թագաւորութեան։ Արեւմտեան եւրոպեան այն ողբերգական արարուածոց մանրամասնութեանց թերի և թիւր կերպով իրազեկ եղաւ յայնժամ, ռուս մամուլն մունջ էր հրամանաւ։ Դատավարութիւնք դռնփակ կատարուեցան և պաշտօնեաներէն զատ յոյժ բացառիկ ոմանք կարացին ներկայ գտնուիլ, յորոց համարի գտնուեցայ եւ ես մասնաւոր շնորհիւ մի։ Այդ ժամերն արդէն պատմութեան ծոցն մտած են և այժմ ներելի

է այն տխուր դէպքերն յիշեցուցնելով ներկայ դիպմանց հետ բաղդատութիւն մ'անել յօգուտ և ի խրատ մեր։

Կը յիշէք թէ ռուսընդթուրք պատերազմէն յետոյ էր որ անտեսանելի և անըմբռնելի ընկերութիւն մի գարհուրեցոյց կայսրութիւնն 1879էն ց1882։ Այս ընկերութիւն իւր գաղտատիպ տետրակներուն մէջ ինքզինք կը կոչէր պէսպէս անուններով, որք կ'այլայլէին ըստ չափու չրջափոխութեանն դէպ ի բռնաւոր գործողութիւն. իւր հետեւողք անուանակոչեցին իրենք զիրենք՝ հետ դհետէ՝ իրական, յեղափոխական ընկերվարական, անիշխանական, և վերջապէս գարհուրական։

Այս անյայտ ընկերութեան հարուածներն բազմապատկեցան 1878էն սկսեալ։ Իշխան Քրափոդքին, կառավարիչ Խարքովի, դաշունահար ինկաւ. Մեզէնցէֆ զօրավարն, հեծեալ ոստիկանաց պետ, ցերեկ ու բարի սպաննուեցաւ ի հարուածս րիվոլվէրի, Բեդէրոպուրկի մէկ հրապարակին վերայ։ Նման փորձ փորձուեցաւ Լորիս Մելիքովի դէմ։ Զոհեր տրուեցան նաև նուազ բարձրադիր պաշտօնէից և պարզ ոստիկանաց կարգէն։ Խէրսոն քաղաքի մաքսատնէն 1,500,000 ռուպլի գողցան ստորեկրեայ ուղիով, իրենց բռնութիւններուն ծախքերն հոգալու համար։ Քիչ յետոյ վեհապետին անձին դէմ փորձեր արին։ Սոլովիէֆ ատրճանակ պարպեց կայսեր վերայ Ամառնային Պարտիզին։ Այդ վայրկենէն սկսեալ գործածեցին ուժանակ և այլ պայթուցիկ նիւթեր փոխանակ դաշունի և ատրճանակի։ 1879 ին Հարթման պայթեցոյց չոքեկառքն ուր կայսրն լինիլ կը կարծէին սխալմամբ։ 1880, Փեար. 17ին, ուժանակն սարսեց Զըմեռնային արքունիքն։ Ոստիկանութիւնն այն ատեն պատրաստուած չէր խաւարային այս մրցման, և բազմաթիւ ձերբակալութիւններն զոր կը գործէր, չէին հայթայթեր բայց եթէ անյօդ կամ հակասական տեղեկութիւններ։ Նորա բոլոր ճըգունք ի ճանաչել և խափանել զթշնամին՝ մեացին ապարդիւն մինչև այն օր յորում զարհուռնականաց մէկ գլխաւորին, Հրէայ Կոլոէնպէրկի, մանրամասն խոստովանութիւնք վերջապէս վարագուրի մէկ ծայրն վեր վերուցին։ Այդ խոստովանութիւնք ծառայեցին հանրային նախարարութեան խուզարկութեանց իբրեւ խարիսխ այն ամեն դատաստանաց մէջ որք իրարու յաջորդեցին 1880էն սկսեալ։ Առաջինն էր Վեչտասանից դատաստանն, որ բացուեցաւ Հոկտեմբեր 25ին (Ն. տ.) առաւօտուն, և տեւեց վեց օր ամբողջ։ Ներկայ էի այդ երկար դատաստանի։

Տասնեւվեց ամբաստանելոց 13ն այր էին և 3ն կին։ Տենդային հրով կը փայլէին մի քանիներու աչկունքն. արանց ոմանց դէմքն խաղաղ և խիստ էր։ Երկուքն հրէական ակնյայտնի տիպար կը ներկայացունէին։ Կանայք տգեղ էին, նիհիլիսդ աղջկանց սովորական դիմագծութեամբ, վարսքն անհոգութեամբ յետկոյս նետուած, երեսքն մաղձային գունով և խոնջած։ Փոքր սապատողն մի միւսներուն ետեւ աներեւոյթ էր։ Նստան ամբաստանեալք հանդէպ պաշտօնէից։ Ի մի կողմ, գաղափար մի թիւր և յիմարական, բայց գաղափար մի հաստատուն. ի միւս թեր, քիչ գաղափար, կամ թոյլ գաղափարներ։ Քան զամենայն մատղաշն ամբաստանելոց 22 տարեկան է, քան զամենայն ծերն՝ 30 տարեկան։ «Դու ի՞նչ ես» հարցման ոմանք պատասխանեցին «անաստուած» կամ «ընկերվարական-յեղափոխական»։ Բաց ի մէկ դարբնէ և մէկ «գաղտ տառագրողէ՝» ոչ ոք որոշ գործ կամ արհեստ կը նշանակէ։ Մի քանին համալսարաններէ անցած են։

Ամբաստանութեան հիմն էին Կոլտէնպէրկի յայտնութիւնքն։ Դա գլխաւոր վաւերագիր մ'է յեղափոխական շարժման ուսումնասիրութեան համար։ Կոլտէնպէրկ ձերբակալուեցաւ 1879 Նոյ. ին, երբ ուժանակով լի պայուսակ մի կը կրէր։ Ինքն իսկ սպաննած էր զիշխան Քրափոդքին, և մասնակցած էր Ապրիլ 2ի և Նոյ. 19ի արքայասպան փորձերուն։ Դատախազն կարդաց Նորա երկար վկայութեան մեծ մասն, յորմէ կը տեսնուէր Նորա իմացական դերիվերութիւնն ընթերակայ ամբաստանելոց վերայ։ Տպաւորութիւնն խոր եղաւ, և չէ կարելի անոր անկեղծ չեչտն ու տառամային չահեկանութիւնն արտայայտել վերլուծութեամբն զոր կուգամ դնել առաջի։

ՏԸ ՎՕԿԻԻԷ

(Ռըվիու տէ Տէօ Մոնտ)

մնացեալն յաջորդ թուով

ԲԱՐԻԶՈՒ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ

Բարիզ, Մարտ 6, 1894

Մէկ ամիսէ աւելի է որ Բարիզու հայ ուսանողաց ընկերութիւնը նոր կենդանութեամբ սկսաւ վերածնիլ։ Նոր տարրեր, անցած ազգայիններ որոնք շատ քիչ ժամանակի համար Բարիզ կը գտնուին կամ կը գտնուէին առիթէն օգուտ քաղեցին զարկ մի տալու համար այդ ընկերութեան, ցնցելու անդամներու անտարբերութիւնը ու հեղգութիւն ու մինչեւ անգամ հետաքրքրելու ամբողջ գաղթականութիւնը։ Ուշիմ անձնաւորութիւններ աշխատեցան ամեն կերպով հաստատելու համար բանախօսութեանց շարք մի. նաեւ պատմական եւ. խնդրի մը վրայ ազգակից մը խօսեցաւ։ Շաբաթ մը վերջը Մ. Մեյեէ, որ դասատու է բարձրագոյն ուսմանց դպրոցը, բանախօսեց հայ լեզուին վրայ եւ Սանսքրիտէն սերած ուրիշ լեզուներու հետ մերինին ունեցած յարաբերութեանը վրայ։ Երիտասարդ բանախօսը իր գեղեցիկ ատենաբանութեան միջոցին յիշեց այն ամեն աշխատութիւնները որոնք նպատակ ունեցած են ճշդելու հայ լեզուին բուն տեղը հնդեւրոպական լեզուաց շարքին մէջ։ Վերջերս ծանօթ Մ. Գառիէռ ատենաբանեց նիւթ ունենալով Մովսէս Խորենացին։ Մ. Գառիէռ մասնագիտութիւն արած է իրեն հայ ժամանակագրութիւնը։ Շատ անգամներ առիթ ունեցած եմ լսելու զինքն Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ, ուր կը դասախօսէ հայերէն լեզուն։ Բայց այդ ատեններէն ի վեր ստուարացած է իր պատճառաբանութեանց պաշարը որ այժմ կը միտի ուղղակի հաստատելու թէ Մովսէս Խորենացին ապրած է Ը կամ Թ դարերուն մէջ։ Մ. Գառիէռ իր հետազօտութեանց միջոցին գտած է թէ խել մը մասեր Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց»ին մէջ թարգմանօրէն քաղուած են օտար հեղինակութիւններէ որոնք լոյս տեսած են միայն Է կամ Ը. դարերուն մէջ։ Ինչպէս կ'երեւի այս բացատրութիւններէն, խնդիրը ոչ թէ միայն շատոնց ի վեր մեր մէջ ընդունուած գաղափարին սխալութեանը վրայ է, այսինքն Խորենացւոյ ժամանակին վըրայ, այլ նաեւ մեծ պատմագրին հեղինակութեանը անօգտութեանը վրայ։ Հոս տեղը չէ անշուշտ երկարել վիճաբանութիւն մը որոյ մասին ուրիշներ կը գրեն արդէն, սակայն ներուի ինձ ուշադրութիւն դարձնել Մ. Գառիէռի սա կէտի վըրայ թէ Խորենացւոյ ոճը, գրութեան եղանակը դարձուածներն ու ասացուածները երբէք Թ դարու մատենագրութեան յատուկ չեն, այլ պէտք է հեռանալ մինչեւ Դ կամ Ե դար գտնելու համար այն ժամանակի հեղինակներու գրչին տակ միեւնոյն հանգամանքները. ինչո՞ւ Մ. Գառիէռ, որ դասատու է հայերէն լեզուի, բաղդատութիւն մը չուզեր ընել այդ տեսակէտէն։

Պետրոս Դուրեանի կեանքի ու գործերուն վրայ գեղեցիկ ատենախօսութիւն մ'ըրաւ նոյնպէս բարեկամներէս մին, բանաստեղծ մը, որոյ այս երկը ընդունելութիւն գտաւ շատ մեծ, եթէ կարելի ըլլար զայն տպագրել եւ ցրուել, անտարակոյս ծառայութիւն մի կ'ըլլար Հայոցս, որովհետեւ արժանի է որ ծանօթանայ վաղամեռիկ, աղքատ բանաստեղծին անուշ ու մաքուր կեանքը ամեն գրասիրաց, մանաւանդ որ Դուրեան, Օտեանի հետ կըրնայ անուանուիլ այժմու մաքուր ու ճըշմարիտ աշխարհաբարը պատրաստողներուն առաջինը։

Շ.

ՆԱՄԱԿ ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅԷ

Ֆրէզնոյ, 13 Մարտ, 1894

... Խմբագիր,

Մարզուանի անցքերէն ետք Եոզղատի մէջ պատահած վերջին դէպքերն ըսկսան քիչ մի յուզել տեղւոյս նոյն քաղաքայի ազգայիններն, որք կը խորհին ու կը ջանան համախոհներ գտնել՝ բողոքագիր մի ուղղելու եւ անգամ մի եւս յիշեցունելու Մեծ Տէրութեանց 61դ յօդուածն։ Արդէն խմբագրելու ալ ելած են։ Իմ կարծիքով աւելորդ եւ ապարդիւն աշխատութիւն մ'է, բայց իրենք կը պատասխանեն թէ վնասակար ալ չէ. այս շատ յոռի փաստն զօրաւոր տեղ բռնած է Ազգայնոց մտքին մէջ, մինչ դեռ իմ համոզումս է թէ ի զուր վատնելու չէ ոեւէ ոյժ երբ արդիւնքն բոլորովին տարակուսելի է։

Այս օրեր եկեղեցական յուզում ու

ինդիր մի ալ կայ տեղացի և հայ բողոքականաց միջև։ Բաղաքիս և Լօչ Անճէլի լրագրաց մէջ ալ բաւական աղմուկ յարոյց և ես ուզեցի նոյն թերթերէն ձեռք բերել ու Ձեզ ուղարկել բայց ունեցողներն չտուին։ Երկար կը լինէր պատմել այս 4—5 տարուան միջոցին պարբերաբար պատահած դէպքերն և խնդրոյն մանրամասնութիւնն, միայն երկու խօսքով ասեմ ձեզ իրողութիւնն։ Տեղական ժողովուրդն առաջնորդ ունենալով իրենց քարոզիչն՝ խիստ դէշ կը վարուին եկեղեցի յաճախող Հայերու հետ՝ առարկելով թէ սխտոր կը հոտին կամ իւրեանց մարմնէն գարշ հոտ կը բուրէ։ Վերջապէս իբր 2 ամիս առաջ կարտաքսուին եկեղեցիէն, ուր այժմ ոտք չեն կոխեր Հայերն և կը պնդեն թէ իրաւունք ունին նոյն եկեղեցւոյ մէջ։ Կ'ըսուի նաև թէ Լօչ Անճիլէն մի քանի երէցներ պիտի բերուին երկու կողմանց գանգատներն լսելու և վճիռ տալու։

Տեղացիք անիրաւ են, և լրագիրք ալ մեծ մասամբ ի նպաստ Հայերուն կը գրեն։ Իրաւ ի սկզբան տեղւոյս Հայերն բաւական աղտոտ և գծուծ վիճակ մի ունէին, ինչպէր ամեն նոր գաղթական, որոց նմոյշն տակաւին կ'երեւի կարգ մի Մարզուանցիներու մէջ. բայց վերջին տարիներս սկսած էին փոքր ի շատէ յարմարիլ և բաւական մաքուր հագուիլ, մանաւանդ եկեղեցի գնալու առթիւ։ Կը պնդեն նաև թէ սխտոր ուտելէ ալ շատոնց ի վեր հրաժարած են։ ՄԱԺԱՆ

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Շնորհակալութեամբ ստացանք ի ձեռն Մեծ. Տէր Յ. Կ. Յորդանանեանի, Սուրապայի Հայոց Խրախուսական Միաբանութեան կողմանէ հետեւեալ նուիրատուութիւններն ի խրախոյս ՀԱՅՐԻ.—

Մեծ. Տեարք Յ. Բ. 50 ֆր., Ս. Յ. 20ֆր. Պ. Ն. Գ. 20 ֆր., Յ. Գ. Տ. Պ. 10ֆր., և Միաբանութեան սնտուկէն 40ֆր. գումար 150 ֆրանք կամ իբր 30 տոլար։

Այս յարգելի նուիրատուաց մէջ կայ Հայրենասէր մի որ գրոց ձեւի տակ թանկ նուէր մ'ալ անցեալ տարի արած է ՀԱՅՐԻ։

Շնորհակալութեամբ ստացանք նաև ի ձեռն Մեծ. Տէր Յ. Իսկէնտէրի, Բարի, ղէն, 15 ֆր. ևս նուէր ի Մեծ. Տէր Ա. է։ Նոյն քաղաքէն ուրիշ հայրենասէր մի կը նուիրէ ներկայ տարիէն մէկ մէկ օրինակ ՀԱՅՐ Նուիրի և Խոյի հայ վարժարաններուն։

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՄՈՒԼՆ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

ԹԱՅՄԶ TIMES

Նիւ Եորքի «Թայմզ» լրագրին Մարտ 11 ի թուոյն մէջ «Էն Արմէնօ Ամէրիքըն» ստորագրութեամբ յօդուած մի հրատարակուած է, որ նոյն թերթի խմբագրականին «մի քանի սրբագրութիւններ» կ'ընծայէ։ Յօդուածագիրն ուժգնօրէն կը հերքէ Թայմզի ջատագովութիւնն թէ Թուրք կառավարութիւնն իրաւունք ունի խռովարարներն իւր երկրէն դուրս պահելու համար ամերիկայի Հայերն չընդունիլ ներս կամ արտաքսել։

«Ի՞նչ արտառոց պատճառանք է այդ, կ'ասէ յօդուածագիրն, չթողլու որ իւր ճիրաններէն ոևէ մէկն պրծի։ Կ'ուզեմ, հարցանել թէ ամերիկացի եղեալ Հայերուն մէջ քանի՞ հոգի գտնուած է յեղափոխական շարժմանց մասնակից։ Դիցուք թէ հինգ կամ տասն հոգի գտնուած լինին. պէ՞տք է որ բոլոր մնացեալներն նեղութեան մատնուին այդ աննշան թուոյն համար, մանաւանդ այսպիսի հարստահարութեանց ժամանակի մի մէջ երբ ոչխարաց հօտ մի իսկ կրնայ յապստամբութիւն շարժիլ։ Եւ դարձեալ, ո՞րքան մեծ եղած է դժուարութիւնն ի զանազանել զյեղափոխականն ոչ-յեղափոխական Ամերիկացի Հայէն։ Թուրք կառավարութեան եղանակն յորոշել ի միմեանց այդ երկուքն ի՞նչ եղած է ցարդ— ամենն ալ անխտիր ի բանտ նետել, և չաբաթներով, ամիսներով տառապանքի ենթարկելէ և թերի վճարեալ պաշտօնէից ձեռքով նոցա բոլոր դրամն կողոպտելէ զկնի, առանց դատաստանի, արտաքսել դնոսա իբրեւ յեղափոխական։ Ցիշենք թէ Կ. Պոլսոյ նախորդ ամերիկեան հիւպատոսն Հէս, որ անցեալ օր վերադարձաւ ի Թուրքիոյ, կը յայտարարէ թէ իւր պաշտօնավարութեան երկու տարիներու ընթացքին մէջ ոչ մէկ հայ-ամերիկացի, որքան ինք գիտէ, գըտնուած է յեղափոխական խլրտմանց միջամուխ։ Ի՞նչ հիման վերայ ուրեմն Բ. Դուռն կը վայելէ գոնէ մասնական համակրութիւնն այս կառավարութեան՝ ի վնաս ամերիկեան քաղաքացւոց։

«Դաձեալ, կ'ասէք թէ իւր ազգութիւնն ուրացող մարդն իւր ժողովրդեան մէջ օգտակար ոյժ մի լինիլ չի կրնար յուսալ ամենեւին։ Այդ խօսք թէ՛ ազօտ է և թէ սխալ։ Եթէ ոչխարք նախամեծար համարին մարդ մի հովիւ ունենալ փոխանակ գայլոյ, կրնա՞մք ամբաստանել թէ այդպէս անելով իրենց ցեղն ուրացած կը լինին։

«Մեք, իբրեւ ամերիկեան քաղաքացի ամերիկեան կառավարութենէն պաշտպանուելու մեր իրաւունքին վերայ կը պնդեմք ընդդէմ այնպիսի հարստահարութեանց, և երբ վրիպի իւր այս պարտք կատարելէ, ինքզինք նշաւակ կ'անէ բարբարոս կառավարութեան մի նախատանաց և այլ տէրութեանց առջեւ կը կորուսանէ իւր անձնական արժանապատուութիւն..»

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅ ՄԻ

ՆԻՒ ԻՆԿԼԷՆՏ ՀՕՄ
NEW ENGLAND HOME

Ի Հարթֆըրտ հրատարակուող այս շաբաթաթերթի Փետր 24ի թիւն կը պարունակէ յօդուած մի, ի գրչէն Տէր Բ. Կրիլլի, որ կը ցուցնէ թէ ինչպէս Եւրոպիոյ մեծ տէրութիւնք, նոյնպէս և Ամերիկա գծուած քաղաքականութիւնն ի վեր կը դասեն քան սկզբունքն՝ Հայկական Խնդրոյն մէջ։

«Սուլթանի մէկ հրովարտակաւն՝ Ամերիկացի եղեալ բոլոր Հայազգիք պէտք է արտաքսուին ի Թուրքիոյ՝ երբ հոն վերադառնան։ Պահա՞ռ— վասն զի նոքա քրիստոնէական գաղափարներ կը տանին յերկիրն Սուլթանաց։ Ասել թէ Հայք խըռովայոյզ են, ըստ որում սոսիալիզներու փոքր թիւ մի կայ իրենց մէջ, այնքան արտառոց է որքան պիտի լինէր պնդել թէ Ամերիկացիք խռովայոյզն որովհետեւ անիշխանական կուսակցութիւն մի կայ Միացեալ Նահանգաց մէջ։

«Հայաստան անդօր և Թուրքիա համեմատօրէն զօրաւոր գոլով, Միացեալ Նահանգաց կառավարութիւնն ձեւապէս Թուրքիոյ կը կողմնակցի, և կը յայտարարէ թէ Ընքլ Սամ թոյլ պիտի տայ որ մեր հայ-ամերիկացիներն արտաքսուին ի Թուրքիոյ առանց պաշտպանութեան և առանց բողոքոյ։

«Այս ներհակ է միջազգային օրինաց սկզբանցն։

«Հայաստան ոչ այլ ինչ կը պահանջէ բայց միայն ինչ որ եօթն տէրութիւնք խոստացած են նմա։ Շատ կ'երկմտիմ թէ երբէք ի պատմութեան եղա՞ծ է քան զայս աւելի յստակ օրինակ սկզբունքն քաղաքականութեան ստորադասելու։

Բ. ԼԱՐԷՆՍ ԿՐԻԼԼԻ,
Ընդհանուր Գործակատար Միջազգային Օրինաց Դաշնակցութեան

ՆԻՒ ԵՈՐՔ «ՍԸՆ» SUN

Յիշեալ թերթին Մարտ 25ի թիւն «Միսիոնարք ի Հայաստան» խորագրով յօդուած մի կը հրատարակէ նոյնպէս ի գրչէն Կրիլլիի։ Այս յօդուածի նպատակն է ցուցնել թէ միսիոնարք ժամանակին առաջին սխալն գործեցին Հայ եկեղեցւոյ հետ վարուելու եղանակին մէջ, և այժմ ալ երկրորդ սխալն կը գործեն Հայոց ազգային պաշտպանութեան խնդրոյն մէջ իրենց բռնած դիրքովն։

«Ես, կ'ասէ, Հնչակեանց չտրժումներն ամեն նկատմամբ չեմ արդարացուներ։ Նոցա եռանդն ու քաջութիւնն լաւ է, բայց բարեկարգութեան ոգին պարսի դրուիլ իմաստուն ղեկավարութեան ձեռքն որ յուսամ ժամանակն պիտի բերէ։... Հայք այս խնդրոյն կը նային սա կերպով — Մեք Եփեսոսի գաղաններուն հետ ահաւոր կռուի մէջ եմք. եթէ դուք (միսիոնարքդ) օգնել չէք կարող մեզ, կ'աղաչեմք, մի՛ օգնէք գոնէ գազաններուն։

«Միսիոնարաց բարոյական ազդեցութիւնն կրնայ արգելուլ ապստամբութիւնն, և նոցա ազդեցութիւնն Բ. Դրան վերայ, չնորհիւ Միացեալ Նահանգաց անկեղծ յարգանքին, կրնայ անբաւ լինիլ։ Եւ այս պիտի լինէր առ Մահիկն արդարութիւն Խաչին ոգւովն։»

Բ. ԿՐԻԼԼԻ

ԻՆՏԻՓԷՆՏԷՆՏ

Աստուածաբան Ուօրտ Նիւ Եորքի «Ինտիփէնտէնթ» շաբաթաթերթի մէջ յօդուած մի կը հրատարակէ.

«THE ARMENIAN PROPAGANDA»

խորագրով, յորմէ կը ծայրաքաղեմք զհետեւեալն։

Թուրք կառավարութիւնն այնքան գէշ է որքան կարելի է երեւակայել։ Անզօր է նա պաշտպանութեան նպատակին համար որ կառավարութեան մի գոյու-

թեան պատճառն է. և հարստահարիչ է. և երբ կասկած ունի՝ նաև անգութ է։ Այդպիսի կառավարութեան մի ներքեւ ապրիլ անէծք մ'է։

«Թուրք կառավարութիւնն բաւական չար է յեղափոխութիւն մի արդարացուցնելու համար, եթէ յոյս կենար թէ յեղափոխութիւնն կը յաջողէր. բայց Թուրքք հինգապատիկ աւելի բազմաթիւ են քան զՀայս և ունին զէնք ու քաջութիւն, մինչ Հայք անզէն և մեծ մասամբ ալ նըկուն են դարաւոր հարստահարութեան պատճառաւ։ Բնաւ յոյս չկայ ապստամբութենէ. և յեղափոխականաց յոյսն միայն այնքան կրնայ լինիլ որ իրենց ագէնտ գործիներն յապստամբութիւն գրգռելով այնպիսի կոտորածներու տեղի տան որ Եւրոպա ստիպուի միջամտել և երկրին կառավարութիւնն ձեռք առնուլ։ Բայց այդ պիտի լինէր Ռուսիոյ տալ զՀայաստան, և այդ իսկ է պատճառն որ ռուսահայ պատուիրակներ են գլխաւոր խռովարարներն։... Թող հանկացուի սա թէ մեր միսիոնարք շատ համակրութիւն ունին հարստահարեալ Հայոց վերայ, որոց նեղութեանց նկարագրութիւնն, մանաւանդ Մշոյ դաշտին վերաբերութեամբ, անասելի կերպով սոսկալի է. սակայն նոքա չեն կարող բանիւ կամ խորհրդով հաւնիլ այն յիմարական ընթացքին որով խռովարարք կը ջանան գրգռել զԹուրքս ի կոտորած, ճիշդ որպէս զի իրենց դատն նպաստաւորի։»

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐԱՑ

«Ինտիպենտէնթի» խմբագիրն կը սըխալի կարծելով թէ Թուրքիոյ Հայոց մէջ գործող ռուսահայ սոսիալիսդներն Ռուս կառավարութեան պատուիրակներ եղած լինին կամ ո և է բաղձանք ունենան ըզՀայաստան Ռուսիոյ իշխանութեան ներքև անցած տեսնելու։ Ռուսահայ սոսիալիսդներն այնքան ատելի են Զարին որքան Սուլթանին։ Միայն թէ ռուս կառավարութիւնն բաւական խորագէտ է օգուտ քաղելու համար իւր թշնամեաց իսկ գրգռիչ գործողութիւններէն ի Թուրքիա. և բնականապէս բաղձալի է իրեն որ իւր սոսիալիսդ հպատակներն օտար երկիրներու մէջ գործ գտնեն քան թէ Ռուսիոյ։

Պէտք է գիտնալ թէ սոսիալիսդներն նիհիլիսդներն են շատ եռանդուն են և նոցա թշնամութիւնն ոչ այս կամ այն կառավարութեան այլ ամեն կառավարութեան դէմ է. բայց որովհետև դեռ բաւական ուժով չեն բովանդակ Եւրոպիոյ տէրութեանց դէմ ելնելու, կործանելու և իրենց ընկերվարական երազն ի գործ դնել փորձելու, առ այժմ շրջահայեաց կը դիտեն թէ ո՛ր երկրի մէջ գործի առիթ և ասպարէզ կրնան գտնել։ Սիկիլիոյ մէջ անցեալ օր օտար ընկերվարական գործիչներու շնորհիւ այն խռովութիւններն տեղի ունեցան, ինչպէս որ Իտալական Խորհրդարանին մէջ Քրիսպի նախարարապետն հաստատեց վաւերագրեր ներկայացունելով։ Թուրքիա ևս համեմատաբար տկար տէրութիւն մի լինելով և դժգոհ և տարասեռ տարրեր պարունակելով՝ լաւ ասպարէզ կ'ընծայէ սոսիալիսդ յեղափոխականաց։ Եթէ հայանուն և հայախօս սոսիալիսդներ չգտնուէին, ուրիշ գործիչներ պիտի յղուէին ի Թուրքիա ուշ կամ կանուխ, որք պիտի չկրնային նոյնքան յարմարութեամբ և դիւրութեամբ աշխատիլ։

ԱՑԼ ԵՒ ԱՑԼՔ

Բարիզի ԹԱՆին մէջ կը կարդամք հետեւեալ հեռագիրն Կ. Պոլսէն յղուած.—

Փետրուար 2ին, Հայ մի, Եոզղատի մէջ սպաննեց իրեն եաւէ վագող սատիկանը։ Արդիւնքն եղաւ արիւնահեղ ամբոխում մի մի յորում 100 Հայեր սպաննուեցան և 50 վիրաւորուեցան։ Թուրքերն 3 մեռեալ և 8 վիրաւոր ունեցան։

ՅԱմասիա, 11 Փետրուարին քրիստոնեայք մանիչ կասկածեալ մի Հայ ըսպաննած լինելով՝ սատիկանութիւնն 28 Հայ ձերբակալեց։

Սեբաստիոյ Գերմանական հիւպատոսն իմացած է թէ յաճախադէպ խուզարկութիւնք կը կրկնապատկեն Հայոց գրգռումն։ Ամերիկայի կառավարութիւնն որոշած է եղեր յղել ի Սեբաստիա յատուկ մասնախումբ մի՝ քննութիւններ կատարելու պաշտօնով։

Կառավարիչն խնդրած է որ իրեն յաջորդ մի նշանակուի։

ԲԱՐԵՄԻՐ ՀԱՅ ՕՐԻՈՐԴՔ

ՄՇԱԿԻ մէջ կը կարդանք.—

«Մեզ հաղորդում են Բագուից, որ այնտեղ մի խումբ օրիորդներ հանգանակութիւն են սկսել յօգուտ Ալէքսանդրօպօլի, Կարսի և Նոր-Բայազիտի սովեալներին։»

«Էրզրումի կողմերում խոլէրա է երեւացել. այդ հիւանդութեան երեւալը Էրզրումի նահանգում այժմ, երբ այն տեղ սով է տիրում, կարող է սոսկալի հետեւանքներ ունենալ։ Էրզրումի նահանգից բազմաթիւ ընտանիքներ գաղթել են դէպի Տրապիզոնի կողմերը, և գտնւում են ամենախեղճ վիճակի մէջ։»

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ Ի ՊՈՍԹՈՆ

Պոսթըն 24 Մարտ, 1894

«Րաֆֆի» դերասանական խումբն առաջին ներկայացումն տուաւ որ էր Պէշիկթաշլեանի «Վահան Մամիկոնեան» ողբերգութիւնն և կատակերգութիւն «Երեք Քաջաց» Ներկայացումն տեղի ունեցաւ Երիտասարդաց Քր. Ընկերակցութեան սրահին մէջ, որ յատուկ թէատրոյի նման յարդարուած էր։

Ժողովուրդն կանուխ խռնած էր և Ուիլկինսի նուագածուաց խումբն սկսաւ նուագել ի Բիւր Ձայնից և ուրիշ երգեր հայկական եղանակաւ։ Ժամն 8ին վարագոյրն բացուեցաւ. Վահան Մամիկոնեան և որդան Ջարեհ դուրս եկան բեմին վրայ իշխանական հագուստով և սրերով, ժողովուրդն ծափահարեց։ Ամբողջ խաղն յաջողութեամբ ներկայացուեցաւ։ Բնիկ Ամերիկացիներ զարմացան երբ տեսան թէ Թուրքիոյ մէջ մեծցած և սնած տղաներ ամերիկեան ճաշակաւ և դերասանի կարողութեամբ կը ներկայացունէին։

Խումբն քաջալերուած այս առաջին քայլէն՝ մտադիր է և կը պատրաստուի մօտերս մի նոր ներկայացում տալ Ազգային ներկայ կեանքէն։

ԱՐԳՈՍ

Յ. Գ.— Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան «Հայ Լրագրութեան Հարիւրամեայ Յոբելեանի» պատկերներուն ընկլագիրներու տետրն դժբաղդաբար կորուսած եմ, տետրն կը բաղկանայ 10 ընկալագրէ, Խէ, 621— 630։ Այդ թիւերն անարժէք են ուրեմն որու ձեռք որ գտանուին։

Ա.

—Էլլիս Այլէնտ ելնող գաղթականաց թիւն Փետրուար ամսոյ մէջ եղաւ 6841. Անցեալ տարւոյ նոյն ամսուան մէջ 8,038 եկած էին։ Այս անցեալ Փետր. ի եկաց մեծագոյն թիւն, 2,215 Իտալացւոցն էր։ Ի Գերմանիոյ կային 1,049, ի Ռուսիոյ,789, յԱնգլիոյ 306։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

«Սիւնի» Պոսթըն— Ձեր նամակն ստացանք։ Կը յիշեցունեմք թէ պարտ է թղթակցին միշտ նշանակել անունն ու հասցէն, թէպէտ չհրատարակուելու պայմանաւ։

—Մասնաւոր շնորհակալութիւն կը պարտիմք Հնդկաստան հրատարակուող անգլիերէն ԱՐԱ Ամսաթերթին որ ՀԱՅՔի անցեալ տարուան «Ազգային Քաղաքականութիւն Հայոց», «Անկախ Լրագրութիւն և Ազատ Քննադատութիւն» և այլ կարեւոր յօդուածներն թարգմանելով քննադատեց և այսպէսով միջնորդ հանդիսացաւ ՀԱՅՔի գաղափարներն ծանօթացունելու ոչ-հայախօս մերազնեայց։

«Եթէ կայ յաշխարհի բան մի որում աւելի քան այլ ամենայնի կը սքանչանամ մարդիկ, է արի մարդն,— այն մարդն որ կը համարձակի դեւին նայիլ և երեսին ասել թէ դու դեւ ես։»

ՃԷՅՄՍ Ա. ԿԱՐՖԻԼՏ

ՆԱՄԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ

Բարեկամ մի նամակի ծոցով ամերիկեան տոլար յղեր է խմբագրութեանս, և նամակն մեզ չէ հասեր։ Այսպիսի անհաճոյ պատահմանց առջեւն առնելու դիւրին միջոց կայ, այն է նամակն ապահովագրել տալ։ Լրագիր ընթերցողներն իրազեկ են թէ որքան յաճախ նամակի ցրուիչներ այդպիսի նամակներ գողցած լինելու յանցանօք դատապարտուած են։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԻՒԱՆԱՔ

Ի Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԷ

«Հայք»էն ինչ ինչ փոփոխութեամբք հանուած այս ուսումնասիրութիւնն կը ծախուի 10 սէնթի։ Հինգ օրինակի գին կանխիկ վճարողն 10 օրինակ կը ստանայ, այսինքն հինգ օրինակ ալ ձրի։

ԱԺԱՆ ԳԻՐՔ

«Հայք»ի Ա. տարին 1 տոլար կամ 5 Ֆր.
„ Բ. „ 1 „ „ „
„ Գ. „ 1 „ „ „

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ 50սէնթ կամ 2 Ֆր. ու կէս:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ 10 սէնթ կամ 50 սանթիմ:

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ, որոյ գինն է 10 սէնթ և ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ որոյ ևս գինն է 10 սէնթ, եթէ 5 օրինակի գինն մէկէն կանխիկ վճարէ ոք (այսինքն 50 սէնթ կամ 2 Ֆր. ու կէս), կը ստանայ ուրիշ հինգ օրինակ ալ ձրի:

«Խրիմեան Հայրիկ» և «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատութիւններէն սակաւաթիւ օրինակներ միայն մնացած լինելով, սովորական գներովն կը վաճառուին:

Կը խնդրեմք որ մեր օրէնքի կամ մանուր տը փօսթի միջոցաւ խմբագրութեան ղրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E.(Եղ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան: Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ:

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով: Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր:

FRANCOIS FRENTZ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ

311 SEVENTH AVE. NEW YORK

27դ և 28դ փողոցաց միջև

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինՙչ ըսել է, գիտէՙք, Հայեր:

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք:

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին:

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի:

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք»ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԵՂԲԱՐՔ

Յ. ԷԿԻԶԵԱՆ

EKIZIAN BROTHGRS

30 Eddy St. Providence R. I.

Անցեալ տարուան Միացեալ Նահանգաց դէպի Եւրոպա մեր ունեցած ստակի փոխադրութեան համեմատութիւնն արդիւնաւոր ըլլալուն՝ ներկայիս կը խոստանամք որ ա՛լ աւելի զոհողութիւններ անեմք։

Անոնք որ կը կարօտին ստակի փոխադրութիւններ անել դէպի Եւրոպա կամ Թուրքիոյ կողմերն, ամեն մէկ քաղաքի իրենց համեմատութեամբն կարգադրած ենք որ թէ մեր անձնական ստուներու և թէ մասնաւոր գործակատարներու ընդունելութեան պայմանաւ փոխանակագրեր պիտի ծախենք գոհացուցիչ գներով։

Այս նկատմամբ մեր հայրենի գրուած նամակներու մասնաւոր ուշադրութիւն անելով անմիջապէս պիտի պատասխանենք։

Գ. ՏԻՕՐՄԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ԳՈՐԾԱԿԱԼ

Ի ՌՈՒՍՃՈՒՔ

Պատիւ ունի ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ պատուարժան ազգայնոց թէ՝ բացի ամեն տեսակ (հայ լեզուաւ) գրեանց և զանազան պատկերներու յանձնակատարութենէ՝ ստանձնած է նաև գործակալութիւն հետեւեալ հրատարակութեանց.

ԱՐԱՐՍ վեցամսեայ պատկերազարդ. ՀԱՅՐ կիսամսեայ հանդէսներու և ՀԱՅՐԵՆԻՔ ամենօրեայ թերթի։

Յանձնակատարութիւնք կը կատարուին արագ և կանոնաւոր կերպով։

Վճարմունք կանխիկ են։

Հասցէ— K. DEUKMEJIAN
Roustchouk, BULGARIE

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բայաստրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցուներու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ